ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

18-ը դեկտեմբերի 2023թ. ք.Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը /դատավոր Ա. Մկրտչյան/, ուսումնասիրելով ԱՁ Լյովա Վիգենի Եղիազարյանի հայցադիմումն ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության՝ ՀԱԷԿ ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի՝ Լյովա Աղաբաբյան Վիգենի ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 15. 11. 2023 թվականին կայացված որոշումն անվավեր ճանաչելու /վերացնելու/ պահանջի մասին,

ՊԱՐԶԵՑ

Հայցադիմումը ներկայացվել և դատավոր Ա.Մկրտչյանին մակագրվել է 13.12.2023թ., 15.12.2023թ. հանձնվել դատավորի աշխատակազմին:

Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը վարույթ ընդունելը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը բացակայում են, ուստի հայցադիմումը պետք է ընդունել վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Նույն օրենսգրքի 234.6 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Նույն օրենսգրքի 234.8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք և նրանց ներկայացուցիչները դատական նիստի ժամանակի և վայրի, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում առանձին

դատավարական գործողություններ կատարելու մասին ծանուցվում են էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ծանուցագրերը և այլ փաստաթղթեր սույն օրենսգրքի 97-րդ հոդվածով սահմանված կարգով հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստին ուղարկելու եղանակով:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ,125-րդ,234.5-րդ,234.6-րդ,234.8-րդ,188-րդ,199-րդ,200-րդ հոդվածներով,Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայցադիմումն ընդունել վարույթ, եզրափակիչ դատական ակտի հրապարկման օր սահմանել 2024թ.հունվարի 29-ը:

Կողմերի ծանուցումն իրականացնել էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հայցադիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեներին ուղարկելու եղանակով:

Պատասխանող «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերությունից պահանջել որոշումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում Դատարանին ներկայացնել ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/23 ծածկագրով գնման գործընթացի՝ իր տիրապետության ներքո բոլոր ապացույցները:

Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

Digitally signed by MKRTCHYAN ARAM 1712720074
Date: 2023.12.18 10:07:01 AMT